

Քաղաքացիների ակտիվությունն ավելի մեծ է, քան նստիկանության ռեսուրսները



Վարչական դատարանը՝ դատավոր Արման Թովմասյանի նախագահությամբ բավարարել է ակտիվիստներ Մհեր Արշակյանի, Կարեն Հարությունյանի, Գոռ Առաքելյանի և Վահագն Մինասյանի հակընդդեմ հայցերը՝ ոստիկանության գործողությունները ճանաչելով ոչ իրավաչափ՝ ակտիվիստներից յուրաքանչյուրի մասով ոստիկանությունից բռնագաձելով 150000 ական դրամ, ընդհանուր թվով 600000 դրամ՝ որպես իրավաբանական ծառայությունների փոխհատուցում:

Ոստիկանությունը ակտիվիստների դեմ հայց էր ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար վարչական պատասխանատվության ենթարկել՝ 50 հազարական դրամ բռնագանձելու պահանջով:

Ակտիվիստների շահերը ներկայացնող փաստաբաններ Տիգրան Սաֆարյանն ու Արտակ Զեյնալյանը հակընդդեմ հայցեր էին ներկայացրել դատարան՝ պահանջելով ճանաչել՝ իրենց վստահորդների կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը, ինչպես նաև: Ճանաչել ոչ իրավաչափ ոստիկանների գործողությունները և մերժել վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցերը:

Ակտիվիստներից Կարեն Հարությունյանը և Երևանի քաղաքապետարանի դիմաց շուրջօրյա անկացվող նստացույցի մասնակից մի խումբ քաղաքացիներ, որոնց թիվը չի գերազանցել 3-ը, 2013թ. օգոստոսի 27-ին խաղաղ հավաք են անցկացրել Երևանի քաղաքապետարանի դիմաց՝ իրենց բողոքն արտահայտելով այն որոշումների դեմ, որոնց համաձայն Երևան քաղաքում հասարակական տրանսպորտի գինը նախկին 100-ի փոխարեն սահմանվել էր 150 ՀՀ դրամ և հանրային փողոցները դարձվել են վճարովի ավտոկայանատեղիներ, ինչպես նաև պահանջել են պատասխանատվության ենթարկել օրինախախտ պաշտոնյաներին:

Շուրջօրյա նստացույցի մասնակիցներից Վահագն Մինասյանը և Սուրեն Սահակյանը հանգստանալու նպատակով պառկել են Երևանի քաղաքապետարանի մուտքի դիմացի աստիճանահարթակում՝ իրենց պահանջները ներկայացնելով Երևանի քաղաքապետարանի վերոհիշյալ որոշումների դեմ: Ոստիկանները թույլ չեն տվել

վերջիններիս իրականացնել բողոքի ակցիան՝ հայտարարելով, որ քաղաքապետարանի մուտքի դիմացի աստիճանահարթակը նախատեսված չէ քնելու համար:

Կարեն Հարությունյանը ոստիկանության ներկայացուցիչներից պահանջել է ապօրինի չմիջամտել անցկացվող խաղաղ հավաքին և առանց իրավական հիմնավորման ազատությունից չզրկել հավաքի մասնակիցներին: Ոստիկանները, սակայն առանց որևէ հիմնավորման ակտիվիստին նույնպես ֆիզիկական ուժի գործադրմամբ տեղավորել են ավտոմեքենայի մեջ և տարել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության, որտեղ նրան պահել են 3 ժամ, որի ընթացքում նա չի կարողացել իր կամքով հեռանալ, չի ապահովվել պաշտպան ունենալու նրա իրավունքը:

Դատավոր Արման Թովմասյանի վճռով անհիմն է համարվել ոստիկանության պնդումները, թե Կարեն Հարությունյանը օգոստոսի 27-ին չի ենթարկվել ոստիկանի պահանջին և գիշերը քնել է քաղաքապետարանի մուտքի դիմաց: Դատական նիստի ընթացքում ոստիկանության ներկայացուցիչ Սոնա Մելիքյանի ներկայացրած փաստարկները դատարանը հիմնավոր չի համարել: Ավելին, դատարան ներկայացրած տեսանյութում բացակայում էին կադրերը, թե Կարեն Հարությունյանը պառկել էր աստիճաններին:

Դատարանը մերժել է նաև ոստիկանության հայցն ընդդեմ սահմանադրական իրավունքի մասնագետ Մհեր Արշակյանի: Այս դեպքում նույնպես ոստիկանությունը դատարանում պնդում էր, թե Մհեր Արշակյանը օգոստոսի 24-ին պառկել է Երևանի քաղաքապետարանի դիմացի փողոցի երթևեկելի գոտում: Դատարանը, սակայն, հաստատված է համարել փաստը, որ «Մհեր Արշակյանը չի պառկել քաղաքապետարանի մուտքի աստիճանների մոտ՝ գետնի երթևեկելի մասում, այլ եղել է քաղաքապետարանի մուտքի դիմացի հարթակի մոտ»:

Դատարանը նաև արձանագրել է, որ ոստիկանությունը «հակառակի վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացրել»: Դատարանն ապօրինություն չի համարել քաղաքապետարանի աստիճաններին քնելը: Դատավոր Արման Թովմասյանի վճռով անհիմն է ճանաչվել նաև ոստիկանության հայցն ընդդեմ Վահագն Մինասյանի, ում նույն օրը բերման էին ենթարկել երկու անգամ՝ ոստիկանի օրինական պահանջը չկատարելու համար: Վարչական դատարանում ոստիկանության ներկայացուցիչը պնդում էր, թե Վահագն Մինասյանն օգոստոսի 23-ին բողոքի ակցիայի ժամանակ բարձրախոսով կոչեր է հնչեցրել, աղմկել է: Հիշեցնենք Վահագն Մինասյանի դեմ ոստիկանությունը մեկ տասնյակից արելի հայցեր է ներկայացրել:

Դատավոր Արման Թովմասյանի մեկ այլ որոշմամբ մերժվեց նաև ոստիկանության հայցն ընդդեմ Գոռ Առաքելյանի, ով, ըստ ոստիկանության, կարմիր գույնով գծանշումներ է արել քաղաքապետարանի մոտ՝ չենթարկվելով ոստիկանի օրինական պահանջին: Ոստիկանությունը բողոքի ակցիաներին մասնակցած քաղաքացիներին տուգանելու պահանջով մոտ 200 հայց է ներկայացրել, որոնցից, այսպիսով շուրջ մեկ տասնյակից ավելի գործերով արդեն պարտվել է դատարանում:

«Բերման ենթարկելու պրոցեսը ոստիկանությունն օգտագործում է մարդկանց պատժի ենթարկելու, հավաքը փչացնելու համար, իսկ թե հետո ինչ կլինի, դա էական չէ: Էդ պահին դա են իրականացնում, իսկ հետագան կարևոր չէ: Հետագան հյուծող, մաշող ժամանակատար պրոցեսներ են: Իրենք էլ են թույլ, որովհետև իրենց ռեսուրսները սահմանափակ են, չեն կարող սպասարկել այսքան պրոցես: Պետության ռեսուրսներից դուրս է այսքան պրոցեսները սպասարկելը: Այսինքն, ակտիվությունն ավելի մեծ է քան ոստիկանական ռեսուրսները», ոստիկանական գործողություններն այսպես է գնահատում դատարանում ակտիվիստների շահերը ներկայացնող իրավաբան Արևտակ Զեյնալյանը:

Ժաննա Ալեքսանյան

http://forrights.am/?ln=1&id_=20&page_id=66